

**ՀՀ իրավապահ մարմինները հորդորում են զերծ մնալ անձանոթ անձանց՝ սոցիալական կայքերի միջոցով անձնագրային տվյալներ տրամադրելուց և չընդունել վարկային կազմակերպությունների կամ բանկերի անուններից հանդես եկող անձանոթ անձանց գայթակղիչ և կասկածելի առաջարկները**

2020 թվականի ապրիլի 13-ին ՀՀ ոստիկանության կողմից տարածված հաղորդագրության համաձայն՝ վերջին 6 ամիսների ընթացքում մի շարք վարկային կազմակերպությունների աշխատակիցների կողմից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու, սև ցուցակից հանելու, առանց երաշխավորի և առանց գրանցված աշխատող լինելու արագ գումար տրամադրելու պատրվակով և այլ գայթակղիչ հայտարարություններով, վստահությունը չարաշահելու եղանակով և խաբեությամբ քաղաքացիների անունով ապառիկ գնված ապրանքները չտրամադրելու և վարկի գումարները չմարելու կամ քաղաքացու անձնագրային տվյալները և դիմանկարն օգտագործելով առցանց վարկ ձևակերպելու և ստացված գումարների միայն մի մասը քաղաքացուն տրամադրելու կամ ընդհանրապես չտրամադրելու դեպքերի առթիվ Ոստիկանությունում նախապատրաստվել են շուրջ 6 տասնյակ նյութեր, որոնցով խարդախության և համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակության առերևույթ դեպքերի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 և 181 հոդվածների տարբեր մասերով և կետերով հարուցվել են քրեական գործեր, և այս պահին կատարվում է նախաքննություն: Քաղաքացիների կողմից Ոստիկանությանը տրամադրած հաղորդումները հիմնականում վերաբերում են հետևյալ իրավիճակներին.

- Մի շարք անձիք, հանդես գալով որպես վարկային միջնորդներ, քաղաքացիներից պահանջել են անձնական տվյալներ (անձնագիր, լուսանկար և այլն), որից հետո այդ քաղաքացիների անունից առցանց եղանակով դիմել են վարկային կազմակերպություններին կամ բանկերին՝ վարկ ստանալու նպատակով: Եթե բանկը կամ վարկային կազմակերպությունը պատրաստակամություն է հայտնել քաղաքացուն տրամադրել օրինակ՝ 1. 000. 000 դրամ վարկ, խարդախ անձը քաղաքացուն հայտնել է, որ նրան կարող է տրամադրվել օրինակ՝ ընդամենը 500. 000 դրամ: Ստանալով վարկն ամբողջությամբ՝ քաղաքացուն փոխանցվել է միայն գումարի մի մասը կամ ընդհանրապես չի փոխանցվել, սակայն քաղաքացին ստիպված մարել է վարկն ամբողջությամբ:
- Որպես վարկային կազմակերպության աշխատակից ներկայացած անձը խաբեությամբ, վարկ տրամադրելու պատրվակով քաղաքացուց վերցրել է նրա անունով ապառիկ եղանակով գնված ապրանքը և չի տրամադրել խոստացված գումարը:
- Ներկայանալով որպես վարկային միջնորդներ՝ վերջիններս գումար ստանալու նպատակով քաղաքացիներին առաջարկել են գնալ տարբեր խանութներ, որտեղ քաղաքացու անունով ձևակերպել են ապառիկ վաճառք, որոշ դեպքերում վճարել են ապրանքի 30 կամ 50 տոկոսը, որոշ դեպքերում՝ ընդհանրապես չեն վճարել՝ խոստանալով վճարել մոտ ապագայում՝ ապառիկ եղանակով գնված իրը պահելով իրենց մոտ: Ստացվում է, որ քաղաքացին չի ստացել ապառիկ եղանակով իր գնած ապրանքը, սակայն կատարել է վճարումներ դրա համար:

2020 թվականի մարտի 19-ին ՀՀ քննչական կոմիտեն հրապարակել է նմանատիպ գործունեություն իրականացնող մի շարք ընկերությունների անվանումներ, որոնք սոցիալական ցանցերում, գետնանցումներում, Երևան քաղաքի և մարզերի տարբեր վայրերում թղթային և այլ տարբերակներով հայտարարությունների միջոցով ակտիվ գովազդ են տարածում՝ արագ վարկեր տրամադրելու, վարկերի տրամադրման գործընթացին աջակցելու առաջարկներով: Նշված անձիք չունեն համապատասխան լիցենզիա և չեն համագործակցում որևէ բանկի կամ վարկային կազմակերպության հետ:

«Varker CC», «MASTER CREDIT», «CREDIT INFO, Good Info», «Varker 1 JAMUM», «Gold Kredit Kapital», «Արագ գումար», «Shtap Gumar Varker», «Varkayin.am», «varkam.am», «arag gumar», «Shtap Gumar», «Բիզնես վարկեր», «Արագ վարկեր», «Varker Aranc Gravi», «Վարկերի տրամադրում», «Varker», «Varker CC», «Varker Online-Վարկեր օնլայն», «Varkayin.am», «Գումար Մեկ Օրում», «Shtap Gumari Tramadrum», «Տրամադրում», «Գումար առանց գրավի»:

Այսպիսով, քաղաքացիներին հորդորում ենք վարկային գործարքներ կատարել միայն վստահելի, ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկերի ու վարկային կազմակերպությունների հետ, անձանոթ անձանց սոցիալական կայքերի միջոցով չտրամադրել անձնագրային տվյալներ, չընդունել վարկային կազմակերպությունների կամ բանկերի անուններից հանդես եկող անձանոթ անձանց գայթակղիչ և կասկածելի առաջարկները՝ նրանց պատրաստած ծուղակը չընկնելու և ֆինանսական ծանր կացության մեջ չհայտնվելու համար: Իսկ եթե արդեն տուժել եք նման գործողություններից, անհրաժեշտ է դիմել համապատասխան իրավապահ մարմիններին:

ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի հաղորդագրություններն առավել մանրամասն հետևյալ հղումներով՝

<https://www.police.am/news/view/varker130420.html>

<http://www.investigative.am/news/view/aranc-artonagrman-varkain-ynkerutyunner.html>